



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ԿՍՏԱՇՐՋԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ԱՌԱՋԻՆ ԿԻՍ**

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ԼՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՌԱՋԻՆ ԼԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

2022 թվականի սեպտեմբերի 27-ին ժամը 13:00-ին քաղաք Էջմիածին, Մովսես Խորենացի 2 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի արտահերթ առաջին նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 22 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի արտահերթ առաջին նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գ.Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը դիտարկվում է անհարգելի՝ վերջիններիս կողմից հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Համայնքի ղեկավարը առաջարկեց մեկ ընթացքով հարգել 2020 թվականին այս օրը Ադրբեջանի կողմից սանձազերծված սադրիչ մարտական գործողությունների ընթացքում 2020 թվականին զոհվածների հիշատակը:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցը և առաջարկեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 22 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի 2022 թվականի սեպտեմբերի 13-ի առաջին նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆԱԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ԼԱԵՎ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՈՒԻԹՅՈՒՆԸ ԿԱՍ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՍԻԿՈՆ ԱԲՐԱՀԱՍՅԱՆԻՆ ԼՐԱՎՃԱՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՈՔ ԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀՈՂԱՄԱՆ ԼՊԱՏԱԿԱՅԻՆ ԼՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԼՈՐՄԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՉՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 11 ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՏՄԱԽԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՆՔ ԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՍԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 131 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ` զեկույցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը: Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում, այդ թվում` հանրային սննդի օբյեկտների, ինչպես նաև սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների բնագավառում ծառայություններ մատուցող կամ գործունեություն իրականացնող անձանց կողմից լուրջությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության` նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը` Արմեն Դավթյանը:

Արմեն Դավթյանը խնդրեց պարզաբանել ինչպե՞ս է վերահսկողությունը սահմանվելու, օրինակ մեքենաներում երաժշտության բարձր հնչելու դեպքում:

Պարզաբանում ներկայացրեց Դ. Գասպարյանը:

Պարզաբանվեց, բողոքի դեպքում այն կվերահասցեագրվի համապատասխան ոստիկանության բաժին:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 22 անդամ

Քվեարկության արդյունքները`
կողմ - 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 132-Ն որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ` զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ներկայացնելով Էջմիածնի համանքապետարանի «Բարեկարգում» տնօրինության տնօրեն Մամիկոն Աբրահամյանին լրավճար սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 22 անդամ

Քվեարկության արդյունքները`
կողմ - 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 133 որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ` զեկույցը ներկայացրեց Էջմիածին քաղաքի բնակարանային կոմունալ վարչության պետ Արմեն Մելքոնյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի սանիտարական մաքրման աշխատանքների համար տեխնիկա ձեռք բերելու վերաբերյալ որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Մակայն ներկայացրեցին մի շարք առաջարկներ քաղաքի տարբեր հատվածները մաքուր պահելու, տեսախցիկներ տեղադրելու և կարգը խախտող անձանց օրենքի սահմաններում պատժելու համար, մասնավորապես տուգանելու մասով:

Համայնքի ղեկավարը առաջարկեց երկու խմբակցություններով հրավիրել բնակիչներին և անցկացնել քննարկում: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 22 անդամ

Քվեարկության արդյունքները`
կողմ - 22

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 134 որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ` զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 22 անդամ

Քվեարկության արդյունքները`
կողմ - 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 135 որոշումը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ` զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 22 անդամ

Քվեարկության արդյունքները`
կողմ - 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 136 որոշումը:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ` համայնքի ղեկավարը ներկայացրեց պաշտոնական դրամաշնորհի հատկացնելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 22 անդամ

Քվեարկության արդյունքները`
կողմ - 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 137 որոշումը:

Համայնքի ղեկավարը հայտարարեց ընդմիջում 10 րոպեով:

Ընդմիջումի ավարտից հետո նիստը կրկին համարվեց բացված և շարունակվեց օրակարգով նախատեսված մնացած հարցերի քննարկումը:

Ընդմիջումից հետո նիստին ներկայացավ ավագանու անդամ Վահան Հախվերդյանը: Տվյալ պարագայում նիստի մասնակիցների թիվը դարձավ 23:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ` համայնքի ղեկավարը ներկայացրեց հայրենիքի պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց ընտանիքների անդամներին տեղական վճարի գծով արտոնություն տրամադրելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Հրայր Ավետիսյանը:

Հրայր Ավետիսյանը խնդրեց պարզաբանել ինչպե՞ս է լուծվելու հարցը, եթե գոհվածի ծնողները և կինը առանձին հասցեներով են բնակվում:

Պարզաբանում ներկայացրեց Դ. Գասպարյանը:

Պարզաբանվեց, որ ինչպես ծնողը այնպես էլ կինը կարող են դիմել և օգտվել արտոնություններից:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 138 որոշումը:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Էջմիածին քաղաքի բնակարանային կոմունալ վարչության պետ Արմեն Մելքոնյանը:

Ներկայացնելով աղբահանության և բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման դիմաց գանձվող վճարները զիջելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 139 որոշումը:

Օրակարգի 9-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 11 որոշմամբ հաստատված հավելված թիվ 2-ի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 20
դեմ – 0
ձեռնպահ – 3

Որոշումն ընդունվեց ձայների միծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 140 որոշումը:

Ավագանու անդամ Գևորգ Ղազարյանը քվեարկության ընթացքում քվեարկել է ձեռնպահ, սակայն որոշումը ստորագրելու ընթացքում սխալմամբ ստորագրել է «ԿՈՂՄ» հատվածում, այնուհետև սխալը որդղելու նպատակով կրկին ստորագրել է «ՁԵՌՆՊԱՀ» մասում: Հաշվի առնելով այն, որ որոշումը կայացնելիս Գևորգ Ղազարյանը քվեարկել է ձեռնպահ, ուստի հիմք է ընդունվում «ՁԵՌՆՊԱՀ» հատվածում դրված ստորագրությունը:

Օրակարգի 10-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Էջմիածին քաղաքի բնակարանային կոմունալ վարչության պետ Արմեն Մելքոնյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտակարգ իրավիճակի հետեվանքով ֆիզիկական անձանց պատճառված վնասները վերացնելու նպատակով շինարարական նյութեր և համապատասխան ծառայություններ ձեռք բերելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Սևակ Խաչատրյանը:

Սևակ Խաչատրյանը խնդրեց պարզաբանել ո՞վքեր են կատարելու տանիքի վերանորոգման աշխատանքները:

Պարզաբանում ներկայացրեց Դ. Գասպարյանը:

Պարզաբանվեց, որ աշխատանքները կկատարեն համապատասխան աշխատակիցները:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 141 որոշումը:

Օրակարգի 11-րդ հարցի առթիվ՝ համայնքի ղեկավարը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 142 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: